ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Democracy Development Foundation

NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY
SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԶՈՐԱԿՈՉԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ, ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ, ՏԱՐԿԵՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ, ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ, ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ, ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱԿՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ, ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱՆԱՁՈՐ

2023

Ուղեցույցը կազմեցին՝ Հայկ Հակոբյան

Նազելի Մովսեսյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Ուղեցույցի նպատակն է իրազեկել ՀՀ զինապարտ քաղաքացիներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Ուղեցույցը կարող է օգտակար լիներ զինվորական հաշվառման ենթակա անձանց, զորակոչիկների, զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների, նրանց ծնողների և հարազատների համար:

Սույն ուղեցույցը կազմվել է 2023 թ. և դրանում ներառված տեղեկությունները պարբերաբար ենթակա են փոփոխության՝ օրենսդրական փոփոխություններին համապատասխան:

Ուղեցույցը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի (DDF) օժանդակության շնորհիվ:

Ուղեցույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զինվորական հաշվառում 1
2. Զորակոչ 4
3. Քաղաքացիների բժշկական փորձաքննությունը, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ժամանակ իրականացվող գործողությունները 6
4. Կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիների զորակոչը 7
5. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատման հիմքերը 8
6. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը 13
   - 6.1 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տրամադրելու պայմանները 13
   - 6.2 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու պայմանները 14
   - 6.3 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու համար անհրաժեշտ գործողությունները 15
   - 6.4 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու դեպքում տարկետում ստանալու համար անհրաժեշտ գործողությունները 17
   - 6.5 Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորելու դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու պայմանները 18
7. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակելու համար իրականացվող վիճականության կարգը 20
   - 7.1 Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակելու համար իրականացվող վիճականահության կարգը 20
   - 7.2 Սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակելու համար իրականացվող վիճականահության կարգը 21
8. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը, բժշկական փորձաքննությունը, ազատման և տարկետման հիմքերը 23
9. Քաղաքացիներին վարժական հավաքներին ներգրավելու կարգը 27
10. ՀՀ ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության կարգը 31
11. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում ընդունված որոշումների (եզրակացությունների) բողոքարկման կարգը 32

1. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Քաղաքացիների իրավունքները և պարտականությունները զինվորական հաշվառման ընթացքում

Իրավունքներ

Զինվորական հաշվառման ընթացքում քաղաքացին իրավունք ունի՝

- պահանջել, որպեսզի հարգվի և պաշտպանվի իր արժանապատվությունը,
- զերծ մնալ ցանկացած տեսակի խտրական դրսևորումներից՝ կապված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,
- ազատվել (բացակայել) աշխատանքից կամ արձակվել ուսումից՝ Տարածքային ստորաբաժանման ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով:
- անհրաժեշտության դեպքում բուժում ստանալ անվճար և առաջնահերթ կարգով պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:
- իր օրինական ներկայացուցչի միջոցով ստանալ պիտանիության մասին բժիշկ-փորձագետի եզրակացության և առողջական վիճակի հետազոտության ակտերի օրինակները:

Պարտականություններ

Զինվորական հաշվառման ընթացքում քաղաքացին պարտավոր է

- ներկայանալ հաշվառման տարածքային ստորաբաժանում,
- հաշվառման վայրը փոխելու դեպքում ներկայանալ համապատասխան Տարածքային ստորաբաժանում հաշվառման նոր վայր ժամանելուց հետո 7-օրյա ժամկետում:

1. Եթե Դուք 16 տարին լրացած արական սեռի ՀՀ քաղաքացի եք, ապա դուք ենթակա եք զինվորական հաշվառման և պարտավոր եք ներկայանալ Ձեր հաշվառման վայրի ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում[1] (այսուհետ՝ Տարածքային ստորաբաժանում):

- Հաշվառման վայր չունենալու դեպքում պետք է ներկայանաք փաստացի բնակության վայրի Տարածքային ստորաբաժանում կամ ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն:
- Օտարերկրյա պետությունում բնակվելու դեպքում զինվորական հաշվառման տարիքը լրանալիս պետք է ներկայանաք տվյալ երկրում գտնվող ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական մարմին:

[1] Նախկին անվանումը զինվորական կոմիսարիատ:

2. Հաշվառման վայրը փոխելու դեպքում Դուք պարտավոր եք զինվորական հաշվառման կանգնելու համար ներկայանալ համապատասխան Տարածքային ստորաբաժանում՝ հաշվառման նոր վայր ժամանելուց հետո՝ 7-օրյա ժամկետում,

3. Հանդիսանալով զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրած անձ Դուք պարտավոր եք պատժի կրումից ազատվելու պահից 7-օրյա ժամկետում ներկայանալ հաշվառման վայրի Տարածքային ստորաբաժանում:

Ձեր առողջական և ֆիզիկական զարգացման վիճակը գնահատելու համար Տարածքային ստորաբաժանումը կազմակերպում և անցկացնում է առողջական վիճակի համակողմանի ուսումնասիրություն, որի շրջանակներում՝

- ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունում անցնում եք առողջական վիճակի հետազոտություն,
- ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից տրված հետազոտությունների արդյունքների հիման վրա անցնում եք բժշկական զննություն և փորձաքննություն, որոնք իրականացնում է Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովը:

Այն դեպքում, երբ զինվորական հաշվառման ենթակա անձը, գտնվելով մշտական բնակության վայրում, ունի ծանր հիվանդություն և զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից, կամ նրան տեղափոխումը հակացուցված է, Տարածքային ստորաբաժանման ղեկավարի համաձայնությամբ զինվորական հաշվառման ենթակա անձի փորձաքննությունը կարող է կատարվել Տարածքային ստորաբաժանում ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

1. ***Առողջական վիճակի հետազոտությունը ներառում է հետևյալ պարտադիր հետազոտությունները.***

1) արտաքին մարմնական զննումը.

2) մարդաչափությունը.

3)արտաքին շնչառական ֆունկցիայի որոշումը (սպիրոմետրիա)՝բժշկական ցուցումի դեպքում.

4) ուժաչափությունը (դինամոմետրիա)՝ բժշկական ցուցումի դեպքում.

5) ֆլյուորոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը.

6) արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը.

7) մեզի և արյան ընդհանուր քննությունը.

8) էլեկտրասրտագրումը.

9) որովայնի օրգանների ՈՒՁ հետազոտությունը.

10) կանխարգելիչ պատվաստումները, որն իրականացվում է ձեր հաշվառման ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունում՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված պատվաստումների ազգային օրացույցի:

2. Առողջական վիճակի գանգատներ ունենալու կամ կախված նախկինում ունեցած առողջական խնդիրներից, վերը նշված ցանկից բացի Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովի կողմից կարող եք ուղեգրվել այլ հետազոտությունների:
3. Հայտնաբերված առողջական խնդրի տեսակից կախված Ձեզ կարող է առաջարկվել ***ամբուլատոր-պոլիկլինիկական*** համ ***հիվանդանոցային պայմաններում*** բուժում, որից դուք իրավունք ունեք հրաժարվել:
   - ***Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժում կարող է առաջարկվել, եթե Ձեզ մոտ ախտորոշվել են***
   - Սոմատիկ քրոնիկ հիվանդություններ (նեֆրոլոգիական, թոքաբանական, գաստրոէնտերոլոգիական, նյարդաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, ակնաբուժական, մաշկային եզակի օջախային),
   - Փոքր (ոչ բարդ) վիրաբուժական միջամտություններ պահանջող հիվանդություններ,
   - Ստոմատոլոգիական՝ թերապևտիկ և վիրաբուժական հիվանդություններ,
   - Սուր՝ թերապևտիկ ուղղվածություն ունեցող հիվանդություններ, որոնք չեն պահանջում շուրջօրյա հսկողություն և բուժման երկրորդային մասնագիտացված մակարդակ,
   - Նևրոլոգիական հիվանդությունների վերականգնողական բուժում:

   - ***Հիվանդանոցային պայմաններում բուժում կարող է առաջարկվել, եթե Ձեզ մոտ ախտորոշվել են***
   - Վիրաբուժական հիվանդություններ,
   - Սեռավարակներ և մաշկային հիվանդություններ,
   - Վարակիչ հիվանդություններ,
   - Հոգեկան հիվանդություններ,
   - Ուռուցքաբանական հիվանդություններ,
   - Տուբերկուլյոզ,
   - Մասնագիտացված բուժօգնություն և շուրջօրյա հսկողություն պահանջող հիվանդություններ,
   - Արյունաբանական հիվանդություններ,
   - Քրոնիկ հիվանդությունների սրացում:
4. Զինվորական հաշվառման շրջանակներում Տարածքային ստորաբաժանումը կարող է պահանջել և ստանալ Ձեր վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.
   - հոգեբուժական, հակատուբերկուլյոզային, մաշկասեռավարակաբանության, նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառված լինելու մասին,
   - բժշկասոցիալական փորձաքննության մարմիններից՝ հաշմանդամություն ունենալու մասին:
5. Ձեր օրինական ներկայացուցիչները (ծնողները) իրավունք ունեն Տարածքային ստորաբաժանումից ստանալ Ձեր առողջական վիճակի վերաբերյալ իրականացված բոլոր հետազոտությունների պատճենները:
6. Զինվորական հաշվառման վերցված լինելու վերաբերյալ Ձեզ տրվում է զինվորական հաշվառման գրքույկ:

2. ԶՈՐԱԿՈՉ

Քաղաքացիների իրավունքները և պարտականությունները զորակոչի ընթացքում

Իրավունքներ

Զորակոչի ընթացքում քաղաքացին իրավունք ունի՝

- պահանջել, որպեսզի հարգվի և պաշտպանվի իր արժանապատվությունը,
- զերծ մնալ ցանկացած տեսակի խտրական դրսևորումներից, կապված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,
- փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցված լինել Տարածքային ստորաբաժանում ներկայանալու պարտավորության մասին,
- ազատվել (բացակայել) աշխատանքից, կամ արձակվել ուսումից՝ Տարածքային ստորաբաժանման ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով,
- պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ անցնել առողջական վիճակի հետազոտություն և փորձաքննություն և անհրաժեշտության դեպքում անվճար և առաջնահերթ կարգով բուժում ստանալ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Պարտականություններ

Զորակոչի ընթացքում քաղաքացին պարտավոր է

- Ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն Տարածքային ստորաբաժանում, որտեղ հաշվառված է:

1. Զորակոչի ենթակա են՝
   - 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը, իսկ գիտության և կրթության բնագավառներում տարկետում ստացած քաղաքացիները՝ մինչև 28 տարին լրանալը,
   - բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները՝ մինչև 35 տարին լրանալը (այսուհետ՝ պահեստազորի սպայական կազմ),
   - այն քաղաքացիները և պահեստազորի սպայական կազմը, որոնց համապատասխանաբար 27, 28 և (կամ) 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ: Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության

զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան մեկ անգամ:

3. Քաղաքացու ներկայությունը հայտարարված զորակոչին ապահովելու համար պատասխանատու է համապատասխան Տարածքային ստորաբաժանումը (դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը), որը պետք է քաղաքացուն **փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով** Տարածքային ստորաբաժանում ներկայանալու պարտավորության մասին ծանուցում ուղարկի:

4. Տարածքային ստորաբաժանում ներկայանալու մասին ծանուցում ստանալու դեպքում Դուք պարտավոր եք ներկայանալ Տարածքային ստորաբաժանում:

- *Ծանուցման մեջ նշվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու իրավական հիմքը,* ***Տարածքային ստորաբաժանում ներկայանալու օրը, ժամը, վայրը և Տարածքային ստորաբաժանումը, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար Տարածքային ստորաբաժանում չներկայանալու և զորակոչից խուսափելու հետևանքը, այլ տեղեկություններ:***

3. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ Ձեր առողջական և ֆիզիկական զարգացման վիճակը գնահատելու համար իրականացվում է համակողմանի ուսումնասիրություն:
2. Բժշկական փորձաքննությունն անցնում եք անձամբ՝ բժշկական հանձնաժողովի յուրաքանչյուր բժիշկ-մասնագետի մոտ: Առողջական վիճակի վերաբերյալ գանգատներ ունենալու դեպքում դրանք անհրաժեշտ է ներկայացնել բժիշկ-մասնագետին:
3. Այն դեպքերում, երբ բժիշկները դժվարանում են վերջնական որոշում կայացնել Ձեր առողջական վիճակի վերաբերյալ, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա համապատասխան Տարածքային ստորաբաժանման ղեկավարը Ձեզ հետազոտման է ուղեգրում համապատասխան բժշկական հաստատություն: **Որպես կանոն, ուղեգրի գործողության ժամկետը մեկ ամիս է:** Հետազոտման ուղեգրվելուց հետո Դուք ներկայանում եք ուղեգրում նշված բուժհաստատություն, որտեղ իրականացվում է Ձեր առողջական վիճակի հետազոտություն, որի արդյունքներով լրացվում է Ձեր առողջական վիճակի հետազոտման ակտը, որը ներկայացվում է Ձեր հաշվառման վայրի Տարածքային ստորաբաժանում:
4. Դուք իրավունք ունեք տեղեկություններ ստանալու Ձեր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկերի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին, և եթե ցանկանում եք ստանալ այդ տեղեկությունները, ապա համապատասխան բուժհաստատությունը պարտավոր է Ձեզ կամ Ձեր օրինական ներկայացուցչին կամ Ձեր կողմից լիազորված անձին տրամադրել այդ տեղեկությունները:
5. Առողջական վիճակի ակտը Տարածքային ստորաբաժանում ներկայացնելուց հետո Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովը եզրակացություն է տալիս Ձեր՝ զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ: Եթե Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովը գտնում է, որ Ձեր առողջական վիճակը թույլ չի տալիս Ձեզ զորակոչվելու, ապա Դուք ներկայացվում եք Կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝ զինվորական ծառայությանը Ձեր պիտանիության վերաբերյալ վերջնական եզրակացություն կայացնելու նպատակով: Դուք պարտավոր եք ներկայանալ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, որին Դուք ներկայացվում եք Տարածքային ստորաբաժանման կողմից: Գործող պրակտիկայի համաձայն՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին Դուք նախապես տեղեկացվում եք Տարածքային ստորաբաժանման կողմից:
6. Եթե Դուք ճանաչվում եք պիտանի զինվորական ծառայության համար, ապա Ձեզ տրվում է ծանուցագիր՝ զորակոչի օրը Տարածքային ստորաբաժանում ներկայանալու և զինվորական ծառայության մեկնելու մասին: Ծանուցագիրը ստանալուց հետո Դուք պարտավոր եք ծանուցագրում նշված օրը և ժամին ներկայանալ Տարածքային ստորաբաժանում:

4. ԿԱՄԱՎՈՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԱԾ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԸ

Զորակոչի ենթակա են կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած և 18 տարին լրացած իգական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը:

Զորակոչը հայտարարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ:

Զորակոչին մասնակցելու համար պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ցանկություն ունեցող իգական սեռի քաղաքացիները կարող են մինչև տվյալ տարվա մարտի 1-ը կամ հոկտեմբերի 1-ը դիմում ներկայացնել իրենց հաշվառման վայրի Տարածքային ստորաբաժանում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ:

Իգական սեռի քաղաքացիների առողջական վիճակի հետազոտումը և բժշկական փորձաքննությունն իրականացվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների համար սահմանված ընդհանուր կարգի համաձայն[2]:

Կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայության ենթակա չեն իգական սեռի այն քաղաքացիները, որոնք՝

- ✓ առողջական վիճակի փորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար ճանաչվել են ոչ պիտանի կամ ժամանակավորապես ոչ պիտանի կամ բուժման կարիք ունեցող,
- ✓ ունեն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետման պայմաններ[3],
- ✓ մինչև շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու օրը գրավոր հրաժարվել են պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելուց:

[2] Տես 6-րդ էջում
[3] Տես 14-րդ էջում

5. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, ով՝

1) առողջական վիճակի պատճառով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար.

2) մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն.

3) ունի ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, կամ որն ընտանիքի միակ արու զավակն է և ունի ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր.

4) հայտարարված զորակոչին առողջական վիճակի պատճառով ԿԲՀ-ի կողմից զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի է ճանաչվել և զորակոչի ընթացքում լրացել է (կլրանա) 24 տարին.

5) հայտարարված զորակոչին առողջական վիճակի պատճառով ԿԲՀ-ի կողմից ճանաչվել է բուժման կարիք ունեցող և նախատեսվող տարկետման նվազագույն ժամկետի ընթացքում կլրանա 27 տարին:

6) բացառիկ դեպքերում՝ ՀՀ կառավարության որոշմամբ:

- **Բացառիկ դեպքեր են համարվում՝**
  - ✓ քաղաքացուն **մշակույթի և արվեստի բնագավառներում** գործունեության համար ՀՀ կառավարության կողմից նախկինում տարկետում տրված լինելու և այդ բնագավառներում քաղաքացու կողմից **նշանակալի նվաճումներ** ունենալու հանգամանքները.
  - ✓ քաղաքացուն **սպորտի բնագավառում** գործունեության համար ՀՀ կառավարության կողմից նախկինում տարկետում տրված լինելու և այդ բնագավառում քաղաքացու կողմից նոր **նշանակալի նվաճումներ** ունենալու հանգամանքները.
  - ✓ զորակոչային տարիքի այլ պետության քաղաքացիություն ունեցող անձի կողմից **ՀՀ քաղաքացիություն ստանալու և** ՀՀ կառավարության կողմից սահմանված **մարզաձևի ՀՀ հավաքական թիմում** կամ ՀՀ դրոշի ներքո միջազգային առաջնություններին **հանդես գալու** հանգամանքները.
  - ✓ **գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում** գործունեության համար ՀՀ կառավարության կողմից նախկինում տարկետում տրված լինելու և քաղաքացու կողմից գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվելու հանգամանքները:

2. Քաղաքացին պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է **ՀՀ կառավարության որոշմամբ՝ կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում ունեցած նշանակալի նվաճումներ ունենալու հիմքով:**

3. Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող են համարվում՝

3.1 Բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսացող) քաղաքացիների դեպքում դիմումը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում՝

1) քաղաքացու ստացած մրցանակները (ոսկե կամ արծաթե կամ բրոնզե մեդալներ)

դպրոցականների հետևյալ առարկայական միջազգային օլիմպիադաներում՝

ա. «International Mathematikal Olympiad, IMO»՝ մաթեմատիկա առարկայից,

բ. «International Physics Olympiad, IPhO»՝ ֆիզիկա առարկայից,

գ. «International Chemistry Olympiad, IChO»՝ քիմիա առարկայից,

դ. «International Olympiad in Informatics, IOI»՝ ինֆորմատիկա առարկայից,

ե. «International Biology Olympiad, IBO»՝ կենսաբանություն առարկայից,

զ. «International Philosopy Olympiad, IPO»՝ փիլիսոփայություն առարկայից,

է. «International Astronomy Olympiad, IAO»՝ աստղագիտություն առարկայից,

ը. «International Olympiad on Astronomy and Astrophysics, IOAA»՝

աստղագիտություն և աստղաֆիզիկա առարկաներից,

թ. «International Geography Olympiad, IGeO»՝ աշխարհագրություն առարկայից,

ժ. «International Linguistics Olympiad, ILO»՝ լեզվաբանություն առարկայից,

ժա. «International Junior Science Olympiad, IJSO»՝ բնագիտություն առարկայից,

ժբ. «International Earth Sciense Olympiad, IESO»՝ երկրի մասին գիտություն

առարկայից,

2) քաղաքացու կողմից հայոց լեզու կամ հայ գրականություն կամ հայ ժողովրդի պատմություն առարկաներից դպրոցականների հանրապետական օլիմպիադաներում 1-ին տեղը գրաված լինելու հանգամանքը:

3.2 Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող (կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսացող) քաղաքացիների դեպքում ուսումնառության շրջանակներում միջին որակական գնահատականի (մագիստրատուրայի համար՝ բակալավրի, իսկ ասպիրանտուրայի համար՝ մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառության շրջանակներում) առավելագույն արժեքի առնվազն 80 տոկոս ցուցանիշ ունենալու և դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում՝

1) տվյալ մասնագիտության գծով «Վեբ օֆ նոլիջ (Web of Knowledge)» կամ «Սկոպուս (Scopus)» միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում առնվազն մեկ (հեղինակությամբ կամ համահեղինակությամբ)՝ հղման ենթակա, հրապարակված գիտական հոդված ունենալու, կամ

2) Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի հրապարակման տարվա ցանկում ընդգրկված ամսագրերում տվյալ մասնագիտության գծով մագիստրատուրայում սովորելու համար առնվազն երկու, իսկ ասպիրանտուրայում սովորելու համար առնվազն երեք (հեղինակությամբ կամ համահեղինակությամբ)՝ հղման ենթակա, հրապարակված գիտական հոդվածներ ունենալու հանգամանքը:

4. Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող են համարվում՝

1) կատարողական արվեստի բնագավառի մրցութային կարգով անցկացվող միջազգային հեղինակավոր՝ առնվազն մեկ նախագծի (մրցույթներ, մրցանակաբաշխություններ, փառատոներ, ցուցահանդեսներ) հաղթող կամ մրցանակակիր դարձած ու մշակույթի և արվեստի բնագավառներում օրենքով սահմանված կարգով ՀՀ պատվավոր կոչում ստացած քաղաքացիները.

2) կատարողական արվեստի բնագավառի մրցութային կարգով անցկացվող միջազգային հեղինակավոր՝ առնվազն երկու նախագծերի (մրցույթներ, մրցանակաբաշխություններ, փառատոներ, ցուցահանդեսներ) հաղթողներ կամ մրցանակակիրներ դարձած քաղաքացիները.

3) միջազգային հեղինակավոր հարթակներում (բեմերում) և խոշոր միջոցառումներում (փառատոներ, համերգներ, ցուցահանդեսներ) պարբերաբար հանդես եկող քաղաքացիները:

5. Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող են համարվում հետևյալ

քաղաքացիները՝

1) դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 4 տարվա ընթացքում օլիմպիական մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի առաջնություններում (մեծահասակների կամ երիտասարդների կամ պատանիների) կամ օլիմպիական խաղերում կամ եվրոպական խաղերում կամ պատանեկան օլիմպիական խաղերում կամ համաշխարհային ունիվերսիադայում 1-5-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած կամ առաջիկա օլիմպիական կամ պատանեկան օլիմպիական խաղերի մասնակցության վարկանիշ ձեռք բերած մարզիկները, շախմատի համաշխարհային օլիմպիադայում 1-5-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները կամ շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադայում 1-3-րդ տեղերը գրաված և առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները.

2) դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 տարվա ընթացքում ոչ օլիմպիական մարզաձևերից ուշու (բացառությամբ կատաների), սամբո, շախմատ մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի մեծահասակների կամ երիտասարդների կամ պատանիների առաջնությունում կամ եվրոպական խաղերում կամ համաշխարհային ունիվերսիադայում 1-3-րդ տեղերը գրաված ու առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները, նավամոդել և բազկամարտ մարզաձևերի աշխարհի կամ Եվրոպայի մեծահասակների կամ երիտասարդների կամ պատանիների առաջնությունում առաջին տեղը գրաված և առնվազն մեկ հաղթանակ տարած մարզիկները.

3) Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների (պատանեկան, երիտասարդական և մեծահասակների) անդամ հանդիսացող մարզիկները, սակայն յուրաքանչյուր հավաքականի կազմում ընդգրկված մարզիկների ընդհանուր թվից ոչ ավելի, քան պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա 22 մարզիկների.

4) օրենքով սահմանված կարգով ՀՀ քաղաքացիություն ստացած և ՀՀ դրոշի ներքո միջազգային առաջնություններին մասնակցող մարզիկները:

6. Պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու հարցը քննարկվում է հայտարարված զորակոչի ընթացքում, բայց ոչ ուշ, քան հայտարարված զորակոչի ավարտի օրվան նախորդող 30-րդ օրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին ներկայացված՝

1) պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացու դիմումի հիման վրա, կամ՝

2) գիտության, կրթության, մշակույթի, արվեստի, սպորտի բնագավառների հեղինակավոր մասնագետների, պետական, քաղաքական և հասարակական գործիչների անհատական կամ կոլեկտիվ միջնորդությունների հիման վրա:

7. Դիմումը կամ միջնորդությունը պետք է ներառեն քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու՝

1) բացառիկ դեպքերի հիմնավորումները,

2) եթե առկա են այդ հիմնավորումները հաստատող փաստաթղթեր, ապա կցվում են նաև այդ փաստաթղթերը,

3) եթե ներկայացվել է միջնորդություն, ապա դրան պարտադիր կցվում է քաղաքացու գրավոր համաձայնությունը՝ իրեն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ:

7.1 Դիմումը կամ միջնորդությունը կարող են ներկայացվել փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով:

7.2 Դիմումը կամ միջնորդությունը կարող է մերժվել՝ եթե քաղաքացին չի բավարարում բացառիկ դեպքերով սահմանված պայմանները:

8. Եթե Դուք օրենքով սահմանված կարգով ունեք պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ազատման հիմք, ապա պետք է ներկայացնեք այդ հիմքն ունենալը հավաստող փաստաթղթերը, բացառությամբ այն դեպքի, երբ Ձեզ մոտ առկա է առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությանը ոչ պիտանի ճանաչվելու հիմքը:

6. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1) առողջական վիճակի պատճառով,
2) ընտանեկան պայմաններից ելնելով,
3) Ազգային ժողովի պատգամավոր ընտրված քաղաքացուն,
4) նպատակային ուսումնառության համար,
5) գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին,
6) բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորողին:

Ընտանեկան պայմաններից ելնելով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք ունեցող կամ այդ հիմքով տարկետում ստացած, ինչպես նաև նպատակային ուսումնառության համար և գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու հիմքով տարկետում ստացած քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել տարկետման իրավունքից և զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

6.1 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տրամադրելու պայմանները

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1) բուժման կարիք ունենալու կամ
2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից **տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով:** Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար **ժամանակավորապես ոչ պիտանի** ճանաչված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից **տարկետում տրվում է մեկ անգամ՝ երեք տարի ժամանակով**: Տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է

պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

6.2 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու պայմանները

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն[4] ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն[5] ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.

4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.

5) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

Եթե քաղաքացին անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխա և որդեգրվել է խնամատար հաստատությունից, և առկա են վերը նշված ցանկի 1-ին և 5-րդ կետերով սահմանված պայմանները, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

[4] Առաջին խմբի հաշմանդամություն:
[5] Երկրորդ խմբի հաշմանդամություն:

2. Վերը նշված պայմաններով չնախատեսված դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

3. Եթե Դուք օրենքով սահմանված կարգով ունեք պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունք, ապա անհրաժեշտ է հայտարարված զորակոչի ընթացքում Տարածքային ստորաբաժանում ներկայացնել տարկետում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, օրինակ՝ ընտանիքի կազմի վերաբերյալ տեղեկանք, ամուսնալուծության վկայական, դատարանի օրինական ուժի մետ մտած վճիռ, որդեգրման վկայական, այլ փաստաթղթեր՝ կախված տարկետում ստանալու օրենքով սահմանված հիմքից:

4. Եթե Դուք տվյալ զորակոչի ընթացքում ընտանեկան պայմաններից ելնելով ստանում եք պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում, ապա պարտավոր եք ստացած տարկետումից հետո յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում Տարածքային ստորաբաժանում ներկայացնել տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերը:

6.3 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու համար անհրաժեշտ գործողությունները

1. Եթե Դուք՝

1) ենթակա եք շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության,

2) սովորում եք ՀՀ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում հանդիսանում եք դիմորդ,

3) ցանկություն ունեք ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու,

ապա կարող եք զորակոչի նախապատրաստական փուլի ժամանակ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը դիմում ներկայացնել Տարածքային ստորաբաժանում՝ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու համար:

Դիմումին կից ներկայացվում են՝

1) Ձեր անձը և ՀՀ-ում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի պատճենները,

2) եթե դիմորդ եք, ապա տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսանալու հանգամանքը հաստատող փաստաթղթերի պատճենները,

3) գնահատման և թեստավորման կենտրոնի համապատասխան հաշվի համարին փոխանցված 1500 դրամ վճարի անդորրագիրը:

Անհրաժեշտ է հիշել, որ սահմանված ժամկետից հետո ներկայացված դիմումները չեն դիտարկվում և մերժվում են:

Ներկայացված դիմումից հետո Դուք անցնում եք առողջական վիճակի փորձաքննություն, որից հետո, եթե ճանաչվում եք պիտանի զինվորական ծառայության համար, ապա Ձեր փաստաթղթերը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացվում են գնահատման և թեստավորման կենտրոն՝ թեստավորումն իրականացնելու համար:

Եթե թեստավորման արդյունքներով ճանաչվում եք հաղթող, ապա Ձեր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքվում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր:

Պայմանագիր կնքելուց հետո Դուք Տարածքային ստորաբաժանում եք ներկայացնում ուսումնական հաստատության կողմից Ձեր ուսումնառության ժամկետի վերաբերյալ տրված տեղեկանքը, որի հիման վրա էլ Ձեզ տրվում է տարկետում:

2. Եթե Դուք՝

1) հանդիսանում եք օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորող,

2) 18 տարին լրանալու օրվա դրությամբ հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով ուսումնառությունը չեք ավարտել,

3) հայտարարված զորակոչի շրջանակներում ենթակա եք պարտադիր զինվորական ծառայության զորակոչի,

ապա պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու համար Դուք պետք է դիմում ներկայացնեք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին:

Դիմումին կից ներկայացվում են՝

1) անձնագրի կամ նույնականացման քարտի, դրանց բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,

2) ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ կրթական ծրագրի տեսակի և համապատասխան կրթական ծրագրով քաղաքացու ուսումնառության սկզբի և ավարտի ժամկետների վերաբերյալ տեղեկատվությամբ, իսկ նախնական

(արհեստագործական) կրթական ծրագրով սովորողների մասով՝ նաև հիմնական հանրակրթական ծրագիր անցած լինելու ավարտական վկայականի պատճենը:

Անհրաժեշտ է հիշել, որ օտարերկրյա պետությունների համապատասխան ուսումնական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերը պետք է վավերացվեն՝ նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ:

6.4 Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու դեպքում տարկետում ստանալու համար անհրաժեշտ գործողությունները

1. Գիտության և կրթության բնագավառներում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նպատակով Դուք կարող եք տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Դիմումին կից ներկայացվում են Ձեր անձը և գիտության և կրթության բնագավառներում Ձեր գործունեությունը հաստատող, ինչպես նաև գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքներ պարունակող (նկարագրող) փաստաթղթերի բնօրինակները և դրանց պատճենները:

Եթե Դուք մասնակցելու եք օլիմպիադաների, գիտաժողովների, մրցանակաբաշխությունների անցկացմանը տվյալ տարվա մայիսի 1-ից կամ նոյեմբերի 1-ից հետո, ապա մինչև համապատասխան զորակոչի ավարտը նախատեսված լինելու դեպքում դիմումում պետք է նշվի նաև Ձեր կողմից դրանց մասնակցության մասին, և դիմումին կցվում են մասնակցությունը հաստատող փաստաթղթերը:

Անհրաժեշտ է հիշել, որ սահմանված ժամկետներից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվում:

2. Մշակույթի և արվեստի բնագավառներում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու համար Դուք կարող եք տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Դիմումին կից ներկայացվում են Ձեր անձը և մշակույթի և արվեստի բնագավառներում Ձեր գործունեությունը հաստատող փաստաթղթերի բնօրինակները և դրանց պատճենները, ինչպես նաև մշակույթի և արվեստի բնագավառների առնվազն երկու հեղինակավոր գործիչների (ՀՀ ժողովրդական արտիստ) երաշխավորագրեր:

Եթե Դուք մասնակցելու եք մրցույթների, մրցանակաբաշխությունների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների անցկացմանը տվյալ տարվա մայիսի 1-ից կամ նոյեմբերի 1-ից հետո, ապա մինչև համապատասխան զորակոչի ավարտը նախատեսված լինելու

դեպքում դիմումում նշվում է նաև Ձեր կողմից դրանց մասնակցության մասին և դիմումին կցվում են մասնակցությունը հաստատող փաստաթղթերը:

Անհրաժեշտ է հիշել, որ սահմանված ժամկետներից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվում:

3. Սպորտի բնագավառում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նպատակով Դուք, իսկ թիմային մարզաձևերի շրջանակներում՝ նաև համապատասխան մարզաձևի ազգային ֆեդերացիայի նախագահը, կարող եք տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Դիմումին կից ներկայացվում են Ձեր անձը և սպորտի բնագավառում նշանակալի նվաճումները հաստատող փաստաթղթերի բնօրինակները և դրանց պատճենները:

Եթե Դուք մասնակցելու եք առաջնությունների, խաղերի, ունիվերսիադաների անցկացմանը տվյալ տարվա մայիսի 1-ից կամ նոյեմբերի 1-ից հետո, ապա մինչև համապատասխան զորակոչի ավարտը նախատեսված լինելու դեպքում դիմումում նշվում է նաև Ձեր կողմից դրանց մասնակցության մասին, և դիմումին կցվում են մասնակցությունը հաստատող փաստաթղթերը:

Անհրաժեշտ է հիշել, որ սահմանված ժամկետներից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվում:

6.5 Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորելու դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու պայմանները

Նշված մասնագիտություններով տարկետումը տրամադրվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ ըստ կրթական աստիճանների (բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա) համապատասխան բուհերում առկա ուսուցմամբ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ընդունված քաղաքացիներին: Բուհերի և մասնագիտությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու համար Ձեր տվյալներն ընդգրկվում են ՀՀ կառավարության որոշման նախագծում՝ համաձայն գնահատման և թեստավորման կենտրոնի կամ բուհերի կողմից մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը տրամադրված ցանկերի: Ասպիրանտուրա ընդունվողների դեպքում ասպիրանտը նախարարություն է ներկայացնում նաև ասպիրանտի և գործատու կազմակերպության միջև կնքված պայմանագրի մեկ օրինակ:

Տարկետման ժամկետի ընթացքում յուրաքանչյուր տարվա մինչև սեպտեմբերի 30-ը Դուք կամ Ձեր կողմից լիազորված անձը Տարածքային ստորաբաժանում պետք է ներկայացնեք ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ հաջորդ կուրս փոխադրվելու վերաբերյալ:

Ուսումնառության ընթացքում պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորելու իրավունքը կորցնելու դեպքում Դուք չեք կորցնում Ձեր տարկետման իրավունքը:

Տարկետում տրվում է համապատասխան կրթական աստիճանով (բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա) ուսումնառության ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչև Ձեր 27 տարին լրանալու օրը: Յուրաքանչյուր կրթական աստիճանով ուսումնառության համար տարկետում տրվում է մեկ անգամ:

7. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԻՃԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

8.1 Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակելու համար իրականացվող վիճակահանության կարգը

- Եթե Դուք ճանաչվել եք պիտանի պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչի շրջանակներում, ապա զինվորական ծառայության մեկնելու օրը Տարածքային ստորաբաժանումը Ձեզ ներկայացնում է Հանրապետական հավաքակայան, որտեղ կազմակերպվում է զորակոչված քաղաքացիներին ծառայության վայրեր նշանակելու վիճակահանությունը:
- Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելիս հաշվի են առնվում ստացած կրթությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, այլ պայմաններ:
- Վիճակահանությունն իրականացնելու նպատակով ստեղծվում է հանձնաժողով, որի կողմից պատրաստվում են տվյալ օրվա դրությամբ համալրման ենթակա զորամասերի պայմանական համարներով թերթիկներ, որոնք կնքվում են գլխավոր շտաբի կնիքով, ծալվում են և մետաղյա ամրակով ամրացվում այնպես, որպեսզի զորամասի պայմանական համարը չերևա, որից հետո դրանք լցվում են վիճակահանության թմբուկներում:
- Վիճակահանությանը մասնակցելու նպատակով Դուք ներկայացվում եք վիճակահանության դահլիճ, որտեղ մոտենում եք Ձեր կարգավիճակին համապատասխանող վիճակահանության թմբուկին և վիճակահանության հանձնաժողովի ներկայությամբ թմբուկից հանում եք վիճակահանության մեկ թերթիկ, բացում և բարձրաձայն կարդում եք վիճակահանության թերթիկում նշված զորամասի պայմանական համարը, որից հետո այն տալիս եք հանձնաժողովի անդամին: Ստացված վիճակահանության թերթիկի հիման վրա հանձնաժողովի անդամը Ձեր վիճակահանության թերթիկում գրառում է Ձեր անունը, հայրանունը, ազգանունը և Տարածքային ստորաբաժանումը, վիճակահանության հանձնաժողովի պատասխանատուն կնքում և ստորագրում է վիճակահանության թերթիկը, որից հետո Դուք ստորագրում եք վիճակահանության թերթիկի համապատասխան տողում և դուրս գալիս վիճակահանության դահլիճից:
- Եթե Դուք շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության եք զորակոչվել Ձեր եղբոր հետ միասին, ապա ցանկության դեպքում կարող եք ծառայության նշանակվել միևնույն զորամասում: Այս դեպքում վիճակահանությանը մասնակցում է միայն մեկ եղբայրը:
- Եթե Դուք զորակոչվում եք շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության և ունեք պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր, ապա ցանկության դեպքում Դուք կարող եք ծառայության նշանակվել Ձեր եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե Ձեր եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը կամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է

անցնում այնպիսի զորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում զորակոչվող եղբոր կողմից:

- Վիճակահանությանը չեն մասնակցում՝
  - ✓ շարքային կազմի այն պարտադիր զինծառայողները, որոնք ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ կնքել են պայմանագիր,
  - ✓ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով ՀՀ պաշտպանության նախարարության հետ զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած զորակոչված զինծառայողները,
  - ✓ տվյալ զորակոչի շրջանակներում սպայական կամ սերժանտական դասընթացներ կազմակերպված լինելու դեպքում՝ համապատասխան դասընթացին մասնակցելու դիմում ներկայացրած և համապատասխան դասընթաց անցնելու համար ընտրված զորակոչված զինծառայողները:

Վիճակահանության գործընթացը տեսաձայնագրվում է:

8.2 Սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակելու համար իրականացվող վիճականահության կարգը

- Վիճակահանությունն իրականացվում է ըստ հոսպիտալային օղակի և զորամասային օղակի համալրման հերթականությամբ:
- Ասպիրանտուրա (դոկտորանտուրա) ավարտած կամ գիտական աստիճան ունեցող զորակոչված սպաների վիճակահանությունն իրականացվում է առանձին՝ ըստ գիտական մասնագիտացման, իսկ հոսպիտալային օղակի համալրման ենթակա հաստիքների վիճակահանությանը մասնակցում են այն զորակոչված սպաները, ովքեր ունեն այդ հաստիքների համար սահմանված մասնագիտացմանը համապատասխանող մասնագիտացում:
- Համալրման ենթակա բոլոր թափուր հաստիքների անվանումներով, ըստ դրանց համար սահմանված մասնագիտացման, պատրաստվում են փակ ծրարներ՝ ամրացված մետաղյա ամրակով և կնքված կադրերի և ռազմական կրթության վարչության կնիքով: Յուրաքանչյուր ծրար պարունակում է համալրման ենթակա մեկ զորամասի պայմանական համարը պարունակող ծալված վիճակահանության թերթիկ:
- Ըստ մասնագիտացումների համալրման ենթակա տեղերի և ըստ մասնագիտացումների առկա զորակոչված սպաների հարաբերակցությունը պահպանելու համար տվյալ մասնագիտացմամբ վիճակահանությանը մասնակցում են այդպիսի մասնագիտացում ունեցող բոլոր զորակոչված սպաները, որի նպատակով ավելացվում են վիճակահանության դատարկ ծրարներ: Այդպիսի ծրարներ ընտրած զորակոչված սպաները այնուհետև մասնակցում են զորամասերի բուժկետերի թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը:

- Ըստ մասնագիտացումների հոսպիտալային համակարգի թափուր պաշտոնների պահանջարկը համալրվելու դեպքում համապատասխան մասնագիտացումներով զորակոչված սպաները մասնակցում են զորամասերի բուժկետերի թափուր հաստիքների համալրման վիճակահանությանը:
- Վիճակահանությանը մասնակցելու նպատակով Դուք ներկայանում են վիճակահանության դահլիճ, ըստ մասնագիտացման, մոտենում եք ծրարների սեղանին և պատահականության սկզբունքով վերցնում տվյալ մասնագիտացման ծրարների խմբից մեկ ծրար, բացում և բարձրաձայն կարդում եք վիճակահանության թերթիկում նշված զորամասի պայմանական համարը, ստորագրում վիճակահանության թերթիկի վրա և այն տալիս հանձնաժողովի քարտուղարին: Ձեր կողմից բացված վիճակահանության ծրարը կցվում է Ձեր անձնական գործին:
- Վիճակահանության արդյունքներով նախորոշված ծառայության վայր մեկնելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության կողմից Ձեզ տրվում է կարգադրագիր՝ 3-օրյա ժամկետում ծառայության վայր ներկայանալու համար:

8. ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԸ, ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱԶԱՏՄԱՆ և ՏԱՐԿԵՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպման հետ կապված գործողությունները, պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ժամկետը, զորակոչի ենթակա անձանց թվաքանակը և այն զինվորական հաշվառական մասնագիտությունը, որն ունեցող պահեստազորի սպայական կազմի քաղաքացիները ենթակա են զորակոչի, սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ՝ յուրաքանչյուր զորակոչի համար:

2. ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման ուժի մեջ մտնելուց հետո յոթնօրյա ժամկետում ՀՀ պաշտպանության նախարարն ընդունում է պահեստազորի սպայական կազմի բժիշկ-մասնագետների պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչի անցկացման մասին հրաման:

3. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչի կազմակերպման շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվում է պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողով, որը.

1) համակարգում և վերահսկում է պահեստազորի սպայական կազմի զորակոչի ապահովման ուղղությամբ Տարածքային ստորաբաժանումների գործունեությունը.

2) եզրակացություն է ներկայացնում ՀՀ պաշտպանության նախարարին՝

- պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին,
- պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,
- պահեստազորի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին,
- զորակոչի ենթակա անձանց թվաքանակը լրանալու դեպքում զորակոչին կանչված մնացած քաղաքացիների զորակոչը հետաձգելու մասին,
- քննարկում է Տարածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տրված բողոքները:

Անհրաժեշտ է հիշել, որ պահեստազորի սպաների զորակոչի մանդատային հանձնաժողովի որոշումը դրա կայացման օրվանից եռօրյա ժամկետում տրվում է քաղաքացուն կամ նրա ներկայացուցչին:

4. Պահեստազորի սպայական կազմի քաղաքացիների բժշկական փորձաքննությունը Տարածքային ստորաբաժանման ղեկավարի կարգադրությամբ իրականացնում են Տարածքային ստորաբաժանումների բժշկական հանձնաժողովները:

Մինչև փորձաքննությունը սկսվելը Տարածքային ստորաբաժանումն անհրաժեշտ փաստաթղթերը (անձնական գործը) ուսումնասիրման է ներկայացնում բժշկական հանձնաժողովին:

5. Այն դեպքերում, երբ փորձաքննության ենթակա անձը, գտնվելով մշտական բնակության վայրում, տառապում է ծանր հիվանդությամբ և զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից, կամ նրան տեղափոխումը հակացուցված է, Տարածքային ստորաբաժանման ղեկավարի համաձայնությամբ զինապարտի փորձաքննությունը կարող է կատարվել Տարածքային ստորաբաժանում ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

6. Բժշկական հետազոտության ընթացքում բժիշկ-մասնագետները Ձեր առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն տալիս են անհատական գնահատման կարգով: Առողջական վիճակի վերաբերյալ գանգատներ ունենալու դեպքում դրանք անհրաժեշտ է ներկայացնել բժիշկ-մասնագետին: Բժիշկ-մասնագետի կողմից լրացվում է օբյեկտիվ զննության թերթիկ, որում գրանցվում են ներկայացված գանգատները, օբյեկտիվ զննությամբ հայտնաբերված խնդիրները, ախտորոշումը, հետազոտության ուղեգրելու անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մասնագետի հիմնավորումը, իսկ հետազոտումից հետո նաև տրված ախտորոշումը, զինվորական ծառայության համար Ձեր պիտանիության աստիճանը:

7. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝

1) առողջական վիճակի պատճառով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար.

2) մինչև պահեստազորի սպայական կազմ որակավորվելն անցել է պարտադիր զինվորական ծառայություն,

3) առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից հինգերորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում,

4) առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից երկու անգամ երեք տարի ժամանակով տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում,

5) 35 տարին լրանալու օրվա դրությամբ ընտանեկան պայմաններից ելնելով ստացած տարկետման իրավունքը չկորցնելու դեպքում:

8. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1) բուժման կարիք ունենալու կամ

2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող՝ պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է հինգ անգամ՝ մեկ տարի ժամանակով: Հինգերորդ անգամ

տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից:

Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված՝ պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երկու անգամ՝ երեք տարի ժամանակով: Երկրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից:

Նշված դեպքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված՝ պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացին մինչև 35 տարին լրանալը ենթակա է բժշկական վերափորձաքննության՝ հինգ տարին մեկ անգամ: Բժշկական վերափորձաքննության արդյունքներով պիտանի զինվորական ծառայության համար կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար ճանաչված՝ պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

9. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

- 65 տարին լրացած կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն[6] ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն[7] ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

- մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ

[6] Առաջին խմբի հաշմանդամություն:

[7] Երկրորդ խմբի հաշմանդամություն:

դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

Եթե քաղաքացին անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխա և որդեգրվել է խնամատար հաստատությունից, և առկա են վերը նշված երկու պայմանները, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է նաև այն քաղաքացուն, որն ունի առանց մոր մեծացող հաշմանդամություն ունեցող երեխա:

Եթե Դուք օրենքով սահմանված կարգով ունեք պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունք, ապա անհրաժեշտ է հայտարարված զորակոչի ընթացքում Տարածքային ստորաբաժանում ներկայացնել տարկետում ստանալու համար հիմք հանդիսացող հանգամանքները հաստատող փաստաթղթերը, օրինակ՝ հաշմանդամությունը հավաստող փաստաթուղթ, ընտանիքի կազմի վերաբերյալ տեղեկանք, ամուսնալուծության վկայական, դատարանի օրինական ուժի մետ մտած վճիռ, որդեգրման վկայական, այլ փաստաթղթեր՝ կախված տարկետում ստանալու օրենքով սահմանված հիմքից:

Եթե Դուք տվյալ զորակոչի ընթացքում ընտանեկան պայմաններից ելնելով ստանում եք պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում, ապա պարտավոր եք ստացած տարկետումից հետո յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում Տարածքային ստորաբաժանում ներկայացնել տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերը:

9. Վարժական հավաքներին ներգրավելու կարգը

Վարժական հավաքները պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների ներգրավվումն է կարճաժամկետ զինվորական ծառայության՝ նրանց ռազմական ունակությունները կատարելագործելու և վերապատրաստելու նպատակով:

Վարժական հավաքները հայտարարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած միջոցառումների ցանկի, ժամկետների և ներգրավվող թվաքանակի ու մասնագիտությունների համաձայն:

Վարժական հավաքների ժամկետը որոշվում է ըստ անցկացման նպատակի և կարող է տևել մինչև երեք ամիս՝ օրենքով սահմանված պահեստազորի առաջին խմբի համապատասխան կարգում հաշվառված պահեստազորայինների ներգրավվման առավելագույն ժամկետների հաշվառմամբ:

1. Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող վարժական հավաքներին կանչվում են պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված պահեստազորայինները:

- Պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված՝

1) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պահեստազորայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև չորս անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում.

2) ավագ ենթասպայական և սպայական (բացառությամբ բարձրագույն սպայական) կազմերի պահեստազորայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև երկու անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում:

- Պահեստազորի առաջին խմբի երկրորդ կարգում հաշվառված՝

1) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պահեստազորայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև վեց անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում.

2) ավագ ենթասպայական և սպայական (բացառությամբ բարձրագույն սպայական) կազմերի պահեստազորայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև երեք անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երկու ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու ամիս մեկ տարվա ընթացքում:

Անհրաժեշտության դեպքում վարժական հավաքի մեջ ներգրավվելու ժամկետը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև

երկու ամիս ժամկետով, ինչպես նաև ավելացվել վարժական հավաքների քանակը՝ չգերազանցելով վարժական հավաքներում գտնվելու՝ սույն հոդվածով սահմանված ընդհանուր ժամկետները:

2. Քաղաքացին վարժական հավաքի կանչվում է իր հաշվառման վայրի Տարածքային ստորաբաժանման կողմից տրված փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցման համաձայն:

Ի դեպ փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու միջոցով, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում անձը համարվում է պատշաճ ծանուցված այն դեպքում, երբ տեղեկատվությունն ուղարկվել է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, ինչպես նաև այն դեպքում, երբ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը: Սույն մասով նախատեսված դեպքում անձը պատշաճ ծանուցված է համարվում ծանուցումն ստանալուն հաջորդող հինգերորդ օրվանից:

Ծանուցման հիման վրա քաղաքացին պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անցնում է առաջնահերթ ու անվճար բժշկական հետազոտություն և փորձաքննություն:

Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում է՝ «ենթակա է կանչվելու վարժական հավաքի.», կամ «ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի»:

3. Վարժական հավաքների ենթակա չէ այն քաղաքացին, ով

- բժշկական հետազոտության արդյունքներով ճանաչվել է վարժական հավաքի կանչվելու ոչ ենթակա,
- ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, կամ որն ընտանիքի միակ արու զավակն է և ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր,
- ամրագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով,
- ունի չորս և ավելի երեխա,
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ կամ դատավոր կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ է, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանը,
- ունի 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը) չունեն այլ զավակ կամ ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի առաջին խմբի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական

ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ,

- ունի երեխա, որին խնամում է միայնակ,
- ունի իր խնամքի տակ գտնվող մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ:

4. Պահեստազորում հաշվառված քաղաքացիները կարող են վարժական հավաքի կանչվել զինվորական ծառայությունից արձակվելուց հետո՝ մեկ տարուց ոչ շուտ: Հայտարարված վարժական հավաքին չի կարող կանչվել այն քաղաքացին, որը պատիժ է կրում ազատազրկման կամ կարճաժամկետ ազատազրկման ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ վարժական հավաքներից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել ներգրավվելու հայտարարված վարժական հավաքին:

5. Վարժական հավաքի ընթացքում քաղաքացին համարվում է զինծառայող, գրանցվում է վարժական հավաքի անցկացման վայրի զորամասի անձնակազմի ցուցակներում և վերցվում բոլոր տեսակի բավարարումների՝ ծառայությունն իրականացնելով զորանոցային պայմաններում և, ըստ անհրաժեշտության, ներգրավվելով մարտական հերթապահության, նրան հաշվարկվում է նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափ, ամրակցվում են զենք, զինամթերք և անհատական պաշտպանության միջոցներ, նրա վրա տարածվում են պայմանագրային զինծառայողների համար օրենքով սահմանված իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, վարժական հավաքի ժամանակահատվածը օրացուցային հաշվարկով ներառվում է քաղաքացու զինվորական ծառայության կամ աշխատանքային ընդհանուր ստաժում:

6. Վարժական հավաքին մասնակցելու ընթացքում քաղաքացու հիմնական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահպանվում է քաղաքացու աշխատատեղը (պաշտոնը): Գործատուի կողմից (անկախ կազմակերպական-իրավական ձևից) սույն մասի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

6.1 Խաղաղ ժամանակ հայտարարված վարժական հավաքներին կարող են կանչվել մինչև 15-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը մեկ աշխատող, 16-ից մինչև 30-ը ներառյալ աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ առավելագույնը երկու աշխատող, իսկ 30-ից ավելի աշխատող ունեցող միևնույն գործատուից (մարմնից, կազմակերպությունից)՝ աշխատողների ընդհանուր թվի ոչ ավելի, քան հինգ տոկոսի չափով աշխատողներ:

7. Աշխատողին վարժական հավաքների ներգրավելիս գործատուն առաջին 30 օրացուցային օրերի ընթացքում շարունակում է վճարել յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողի հիմնական աշխատավարձի և այդ ընթացքում վարժական հավաքներին մասնակցելու օրացուցային օրերի համար աշխատողին որպես զինծառայող

հաշվարկված դրամական ապահովության առնվազն դրական տարբերությունը, իսկ 30 օրացուցային օրը գերազանցող ժամանակահատվածի համար աշխատողի աշխատավարձը որոշվում է գործատուի և աշխատողի համաձայնությամբ կամ կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված կարգով:

8. Քաղաքացու կողմից վարժական հավաքից խուսափելը կամ վարժական հավաքի ընթացքում զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

10. ՀՀ ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. ՀՀ ռազմաուսումնական հաստատության բարձրագույն ռազմամասնագիտական կրթական ծրագրով (այսուհետ՝ ՌՈՒՀ) ընդունելությանը կարող են մասնակցել հանրակրթական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով ավարտական վկայական ունեցող՝

1) մինչև 18 տարեկան ՀՀ քաղաքացիները.

2) պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած կամ պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող՝ մինչև 23 տարեկան պահեստազորայինները կամ զինծառայողները.

3) միջազգային պայմանագրերով սահմանված դեպքում՝ օտարերկրյա պետությունների քաղաքացիները:

2. Ընդունելությունն իրականացվում է մրցութային եղանակով:

3. Ընդունելությանը մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և ներկայացնելու ժամկետը սահմանվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

4. Ընդունելության հանձնաժողովը կազմակերպում է դիմորդի ռազմաբժշկական փորձաքննությունը, ինչպես նաև՝

1) ստուգում է դիմորդի ֆիզիկական պատրաստվածությունը՝ ՀՀ զինված ուժերի ֆիզիկական պատրաստության նորմատիվներին համապատասխան.

2) գնահատում է դիմորդի ընդհանուր գիտելիքները և զարգացվածության աստիճանը:

5. Ընդունելությանը մասնակցելու իրավունք են ստանում այն դիմորդները, ովքեր ճանաչվել են պիտանի՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար: Ընդունելության (ընտրության) համար սահմանվում է՝

1) ֆիզիկական պատրաստության գործնական քննություն.

2) հայերենի, իսկ օտարերկրյա պետությունների ՌՈՒՀ-երի համար՝ նաև հրավիրող կողմի ուսուցման լեզվի թեստավորում՝ թեստային առաջադրանքների կատարման միջոցով.

3) ընդհանուր գիտելիքների և զարգացվածության աստիճանի թեստավորում՝ համակցված թեստային առաջադրանքների կատարման միջոցով կամ մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից միասնական պետական քննության արդյունքներով:

6. Ընդունելության հանձնաժողովն ընդունելության արդյունքներն ամփոփում է դրա ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում և նույն ժամկետում արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է դիմորդին:

11. ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ (ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Դուք իրավունք ունեք բողոքարկել բժշկական փորձաքննության արդյունքներով Ձեր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը.

- ✓ Տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովի եզրակացությունը՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողով[8],
- ✓ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարին կամ ՀՀ վարչական դատարան, եզրակացության կայացման օրվանից երկամսյա ժամկետում,
- ✓ ՀՀ պաշտպանության նախարարի որոշումը՝ ՀՀ վարչական դատարան, որոշումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

2. ՀՀ կառավարության որոշմամբ բացառիկ դեպքերին համապատասխանելու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու վերաբերյալ ներկայացված դիմումը մերժելու մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի որոշումն իրավունք ունեք բողոքարկել՝

- ✓ ՀՀ վարչապետին կամ ՀՀ վարչական դատարան՝ ստանալու պահից երկամսյա ժամկետում,
- ✓ ՀՀ վարչապետի որոշումը՝ ՀՀ վարչական դատարան՝ ստանալու պահից երկամսյա ժամկետում:

3. ՀՀ ռազմաուսումնական հաստատություն ընդունելության արդյունքները և կայացված եզրակացությունն իրավունք ունեք բողոքարկել՝

- ✓ ընդունելության հանձնաժողովին՝ դրանք ստանալու պահից 24 ժամվա ընթացքում,
- ✓ ընդունելության հանձնաժողովի որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարին[9],

ՀՀ պաշտպանության նախարարի որոշումը՝ ՀՀ վարչական դատարան՝ ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

[8] Գործող կարգավորումներով բողոքարկման ժամկետ օրենքով սահմանված չէ, հետևաբար՝ գործում է բողոքարկման երկամսյա ժամկետը, սակայն հաշվի առնելով, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնում և գործում է միայն ՀՀ կառավարության որոշմամբ հայտարարված տվյալ զորակոչի ընթացքում, ապա անհրաժեշտ է բողոքը Կենտրոնական բժշկական հանձնաժողով ներկայացնել հնարավորինս սեղմ ժամկետում:

[9] Գործող կարգավորումներով բողոքարկման ժամկետ սահմանված չէ, հետևաբար՝ գործում է բողոքարկման երկամսյա ժամկետը, սակայն խորհուրդ է տրվում բողոքը ներկայացնել հնարավորինս սեղմ ժամկետում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք
3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք
4. «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թ. թիվ 405-ն որոշում
5. «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. թիվ 404-Ն որոշում
6. «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թ. թիվ 451-Ն որոշում
7. «Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թ. թիվ 450-Ն որոշում
8. «Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018 թ. թիվ 457-Ն որոշում
9. «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 15 փետրվարի 2019 թ. թիվ 89-Ն որոշում
10. «Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 525-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թ. թիվ 1098-Ն որոշում
11. «Հայտարարված շարքային և սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների ծառայության վայրեր նշանակումը կենտրոնացված ձևով և վիճակահանությամբ իրականացնելու, շարքային կազմի պարտադիր զինվորական

ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիներին զինված ուժերի պատվո պահակային վաշտում, երգի և պարի համույթում, գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում, արդի տեխնոլոգիաների մշակումների խմբում, 1991 ստորաբաժանումում, մարզական վաշտում, «զինուժ մեդիա» պետական հիմնարկում զինվորական ծառայության նշանակելու նպատակով ընտրության կարգերը սահմանելու, ինչպես նաև վիճակահանության և ընտրության մրցութային հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 25 հունիսի 2018 թ. թիվ 8-Ն հրաման։

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը անվճար **իրավական աջակցություն** է տրամադրում **ՀՀ ողջ տարածքում**, դրա շրջանակում վարում **ռազմավարական դատավարություններ, մշտադիտարկում** իրականացնում փակ և կիսափակ հաստատություններում, պետական կառույցների, ՏԻՄ-երի, ընտրական գործընթացների նկատմամբ: Կատարում է իրավական ակտերի վերլուծություն և ներկայացնում օրենսդրական առաջարկներ, տեղեկատվություն տրամադրում միջազգային կառույցներին՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ:

Կազմակերպության ուղղություններից մեկն էլ կարողությունների զարգացումն ու իրազեկումն է, որի շրջանակում իրականացվում են **դասընթացներ ու քննարկումներ**՝ թիրախ ոլորտների ներկայացուցիչների (զինծառայողներ, զորակոչիկներ և նրանց ընտանիքներ, ռազմագերիներ, անհայտ կորածներ, հակամարտություններից տուժածներ և նրանց ընտանիքներ, հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ընտանիքներ, դատապարտյալներ, կալանավորներ և նրանց ընտանիքներ, թմրամիջոց գործածողներ և նրանց ընտանիքներ, քրեական գործերում ներգրավված վկաներ, տուժածներ, կասկածյալներ, մեղադրյալներ և նրանց ընտանիքներ, կրոնական փոքրամասնություններ, ընտրողներ, դիտորդներ, քաղաքացիական և քաղաքական ակտիվիստներ, երիտասարդներ) համար:

Մեր հասցեն Վանաձորում՝

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 59,
հեռ՝ +374 (322) 4 22 68
բջջ.՝ (+374) 077 342268

Մեր հասցեն Երևանում՝

ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 32 շենք, 33բն.,
հեռ՝ (+374) 11 24 22 68
բջջ.՝ (+374) 94 04 22 68

կայքէջ՝ www.hcav.am
էլ. հասցե՝ hcav@hcav.am, info@hcav.am, nmovsesyan@hcav.am